

« Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 20/1

22 մայիսի 2012թ.

Քննարկվեց Ա/Ձ Քանաքարա Ղազարյանի բողոքը « ԿԱ ՊԵԿ Եղեգնաձորի ՏՀՏ 19.03.2012թ. թիվ 2109056 ստուգման ակտի և « ԿԱ ՊԵԿ Եղեգնաձորի ՏՀՏ պետի 11.04.2012թ. վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 173804 որոշման դեմ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն « ԿԱ ՊԵԿ Եղեգնաձորի ՏՀՏ պետի 07.03.2012թ. թիվ 2109056 հանձնարարագրի, Ա/Ձ Քանաքարա Ղազարյանի մոտ « օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում կատարվել է ակցիզային դրոշմանիշերի կիրառման ճշտության ստուգում, որն ընդգրկել է 01.08.2000թ-ից մինչև ստուգման ավարտն ընկած ժամանակաշրջանը: Արդյունքում 19.03.2012թ-ին կազմվել է թիվ 2109056 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է հետևյալը:

Ա/Ձ Քանաքարա Ղազարյանին պատկանող պարենային և ոչ պարենային մանրածախ ապրանքների առևտրակետից հայտնաբերվեց պոլիէթիլային տարայով 2լ սպիրտ տարայավորված 0.25լ տարողությամբ երկու հատ «Ավշարի» և մեկ հատ «Մեղվեղևկա» պիտակներով ապակյա տարաներով, որը առաջացնում է վարչական պատասխանատվություն համաձայն « վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի: Համաձայն նույն օրենսգրքի 264 հոդվածի նշված ապրանքներն առգրավվեցին՝ հետագա հետաքննության և պարզաբանման համար: Ձեռներեցը ենթակա է պատասխանատվության « ՎԻՎ օրենսգրքի 170 հոդվածի պահանջներով:

Ա/Ձ Քանաքարա Ղազարյանի գանգատում մասնավորապես նշված է.

07.03.2012թ. « ԿԱ ՊԵԿ Եղեգնաձորի ՏՀՏ պետի թիվ 2109056 հանձնարարագրի համաձայն կատարվել է ակցիզային դրոշմանիշերի կիրառման ճշտության ստուգում: 12.03.2012թ. ինձ է ներկայացվել թիվ 2109056 ակտի նախագիծը, որտեղ նշված էր, որ կատարված ստուգման ժամանակ հայտնաբերվել է 2լ սպիրտ պոլիէթիլենային տարայով: Այդ ակտն իմ կողմից չի ստորագրվել, որտեղ նշել եմ, որ կներկայացնեմ իմ առարկությունները: Իմ կողմից ներկայացված գրավոր բացատրության մեջ նշել եմ, որ դա գնվել է բժշկի դեղատոմսի համաձայն՝ ամուսնուս համար, ինչպես նաև այն հայտնաբերվել է առևտրային կետի պահեստից: Սակայն, այդ հանգամանքը հաշվի չեն առել և « ԿԱ ՊԵԿ Եղեգնաձորի ՏՀՏ պետի թիվ 173804 որոշման համաձայն ինձ ենթարկել են վարչական պատասխանատվության՝ նշանակելով 300.000 դրամի չափով տուգանք:

Այդ տուգանքը վնասում է ոչ միայն իմ առևտրային գործունեությանը, այլև իմ ընտանիքին: Ես երկրորդ կարգի հաշմանդամ եմ, իսկ ամուսինս նոր է վիրահատվել:

Առևտրային գործունեությունն ծավալում եմ մոտ 8 մ2 տարածքում, այն հանդիսանում է ընտանիքիս միակ եկամտի աղբյուրը, որով պահում եմ 11 շնչից բաղկացած ընտանիքս:

Ես առարկում եմ թիվ 2109056 ակտը և թիվ 173804 որոշումը, քանի որ « ԿԱ ՊԵԿ Եղեգնաձորի ՏՀՏ պետի կողմից հաշվի չեն առնվել վերոնշյալ հանգամանքները, ինչպես նաև նրանք որևէ ձևով չեն ապացուցել, որ դա նախատեսված է եղել վաճառքի համար:

Խնդրում եմ վերացնել « ԿԱ ՊԵԿ Եղեգնաձորի ՏՀՏ թիվ 2109056 ակտը և թիվ 173804 որոշումը:

« ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով Ա/Ձ Քանաքարա Ղազարյանի և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ:

Ստուգման ակտի 1-ին կետով արձանագրվել է, որ Ա/Ձ Քանաքարա Ղազարյանին պատկանող պարենային և ոչ պարենային մանրածախ ապրանքների առևտրակետից հայտնաբերվեց պոլիէթիլային տարայով 2լ սպիրտ տարայավորված 0.25լ տարողությամբ

երկու հատ «Ավշարի» և մեկ հատ «Մեղվեղևկա» պիտակներով ապակյա տարաներով, որը առաջացնում է վարչական պատասխանատվություն համաձայն ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի: Արձանագրվել է նաև, որ ձեռներեցը ենթակա է պատասխանատվության ՀՀ ՎԻՎ օրենսգրքի 170 հոդվածի պահանջներով:

Հիմք ընդունելով ստուգման ակտով արձանագրված խախտումը ՀՀ ԿԱ ՊԵԿ Եղեգնաձորի ՏՀՏ պետի 11.04.2012թ. վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 173804 որոշմամբ Ա/Ձ Քանաքարա Ղազարյանը ՀՀ ՎԻՎ օրենսգրքի 170.8 հոդվածի հատկանիշներով ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ գումարով 300.000 դրամ:

Նախ հարկ է նշել, որ ստուգման ակտում նշված Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170 հոդվածը վերաբերում է պետական մենաշնորհի հանդիսացող ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելուն, ընդ որում նշված հոդվածը 23.06.97թ-ից հանվել է:

Վերոգրյալից ըստ էության հետևում է, որ ստուգման ակտը կազմվել է ՀՀայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի պահանջների խախտմամբ:

Բացի այդ, քննարկման ընթացքում պարզվեց, որ վերոգրյալ սպիրտը հայտնաբերվել է Ա/Ձ Քանաքարա Ղազարյանին պատկանող առևտրակետի պահեստային տարածքից: Ընդ որում, սույն գործի համար կարևոր նշանակություն ունի այն հանգամանքը, որ ստուգման ընթացքում Ա/Ձ Քանաքարա Ղազարյանի կողմից հիշատակված սպիրտի իրացման փաստ չի արձանագրվել:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170.8 հոդվածի համաձայն. «Ակցիզային դրոշմանիշներով դրոշմավորման ենթակա չդրոշմավորված (չվերադրոշմավորված) չդրոշմավորված ապրանքներ իրացնելը, եթե այդ ապրանքների ընդհանուր արժեքը վաճառողի մոտ նշված (չնշված լինելու դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված) գներով չի գերազանցում երկու հարյուր հազար դրամը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով»:


Քննարկվող դեպքում հաշվի առնելով այն հանգամանքը, որ ստուգման ընթացքում Ա/Ձ Քանաքարա Ղազարյանի կողմից ակցիզային դրոշմանիշներով դրոշմավորման ենթակա չդրոշմավորված ապրանքի իրացման փաստ չի արձանագրվել, հետևապես Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170.8 հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցը կիրառելի չէ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ է՝

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ Եղեգնաձորի ՏՀՏ 19.03.2012թ. թիվ 2109056 ստուգման ակտը և ՀՀ ԿԱ ՊԵԿ Եղեգնաձորի ՏՀՏ պետի 11.04.2012թ. վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 173804 որոշումը:

Հանձնաժողովի նախագահ



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ